մեր ազգութեան՝ իր բարձր գաղափարով, և մեր գերբնական կրօնքին՝ իր սրբութեան մէջ. և յօժարակամ սրտով կու տանք մեր Ազգին՝ ինչ որ Ազգինն է, և Կրօնքին ինչ որ Կրօնքինն է, աստուածեղէն պատգամին համեմատ «Տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։

Այսօր մամուլի էջերուն մէջ կը հալածուի կրօնքը որպէս «յետադիմութիւն». որպէս թէ յառաջադիմութիւն ըլլային կուսակցական պայքարը և անոր քարոզները և անոր հետեւորդ դաւերն ու եղբայրասպանութիւնները...։

Եւ յետադիմութիւն է եղեր փարումը Խաչին և Աւետարանին՝ որոնք կը սորվեցնեն սիրոյ և եղբայրութեան նուիրական դասեր, միակ և անսխալ գրաւական մեր ընկերական և ազգային վերածնութեան և բարօրութեան։

Ահա մեր լրագրութեան հոգին իր մռայլ՝ բայց իրական գոյներով։ Մենք զգուշացանք անուն տալէ. nomina sunt odiosa. ողջամիտ ընթերցողը ծանօթ ու հոս յեղյեղուած ընդհանուր սկզբունքներուն համեմատ դիւրաւ պիտի անդրադառնայ թէ ո՞ւր են մեր մատնանշած չարիքներուն բոյները։

Զմոռնանք որ բարեբախտօրէն բացառութիւններ ալ ունինք մամուլին մէջ, որոնք անշուշտ իրենց հետեւողներ կ'ունենան, և պէտք է որ այլեւս ունենան, անպայման և փութով։

Հեռու գերազոյն և անսխալ պատգամատուի յաւակնութենէն՝ մենք արիւնոտ սրտով է որ տողերս կ'ուղղենք մեր մամուլի խմբագրական մարմիններուն, քանի որ մեր ժողովրդեան կեանքն ու մահը անոնց գրչին մէջ է, և վստահ ենք որ անկեղծօրէն խորհելով պիտի անդրադառնան չարիքին՝ որ գործուած է մամուլի ձեռքով կուսակցութեան թէ դրօշի կամ այլ տիտղոսներու տակ. և ինչպէս ցարդ ոգեւին լծուեցան ու պառակտեցին ազգը, վիրաւորեցին անոր խիղճն ու պատիւը, վեհանձնութիւնն ունենան յանուն մեր Նահատակներուն, յանուն մեր Ազգին, յանուն մեր ապագային նոյն խանդով փարելու վերաշինութեան գործին խաղաղասէր կոչով մը և նոր ուղղութեամբ՝ ուր հնչէ հեշտալի ձայնը եղբայրութեան

«Եղբա՛յր եմք մեք — Որ մրրկաւ էինք զատուած»
Բախտին ամէն ոխ չարանենգ — Ի մի համբոյր ցրուին ի բաց...
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն — Քան զանձկալի եղբայր անուն»։

Եղբայրութիւն՝ Հայութեան դրօշին տակ. ահա հիմնական ուղղութիւնը մեր հայ լրագրութեան։

Ցարգանք մեր սերունդին՝ ինչպէս կ'երգէր լատին քերթողը. Maxima debetur puero reverentia. հետեւաբար ոչինչ գրել որ վրդովէ սիրտը, կամ վտանգէ անոր անմեղութիւնը. քանի որ անոր պիտի աւանդենք Ճակատագիրը մեր ցեղին՝ իր բոլոր հարստութեամբ և յոյսերով. խանդավառենք զանի հայրենիքի սիրով, Նահապետին հետ կրկնենք անոր որ «Ցաստուածազարդն ելնէ հանդէս — Հայ հայրենեաց ելնէ ի տես». հոն՝ ուր կ'ապրի և կը մեծնայ ամենուս սիրելի Հայաստանը՝ Արարատի հովանւոյն ներքեւ, ուր պէտք է երթայ հանգչելու և մեր ոսկրոտին՝ մեր Հայրերու շիրիմներուն քով։

Եւ սերունդի յարգանքը մեր Հայրերու կրօնքին վրայ պիտի յենու։

Ինչ որ ըսուած է անհատին համար «կեանք և մահ ի ձեռս լեզուի» նոյնը կրնանք վերաբերել մեր ցեղին և ազգութեան թէ «Հայուն կեանքն ու մահը իր մամուլին մէջ է»։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՄԱՐԱՆ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊՐՈԿՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԻ

ՅԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Ոչ միայն աստուածաբանական՝ վեհ թռիչքով ու հոգւով և պերճաբան, վսեմ ոճով գեղեցիկ է ճառս, այլ նաեւ պատմական տեսակէտով՝ հետաքրքրական։

(Գլ. Ա) Մարդեղութեան բարձր նպատակը և օրուան պատեհը նախ հակիրճ խօսքով դնելէն վերջ, կ'անցնի Ծննդեան և Յայտնութեան տօնից իրարմէ ունեցած խտիրը բացատրել։ Ապա (Գլ. Բ) կը հրաւիրէ զմեզ Ցորդանանու մէջ կատարուած Խորհրդին քանի որ (Գլ. Գ) Փրկչին խոնարհութեամբ սքանչացող օրհներգու ըլլալու իրեն հետ. բասատ ջրհեղեղին փոխան՝ շնորհաց և սրբութեան նոր հեղեղ մը կը նկատէ Հայրապետը։ Սիրուն դրուագ է (Դ—Զ) Ցովհաննու՝ զՅիսուս մկրտելու բացէ ի բաց հրաժարումը, Անոր գերագոյն մաքրութեան առջեւ՝ իր անարժանութիւնը պատճառելով, և հուսկ իրրու բացարձակ Տիրոջ՝ հնազանդելով յանձնառութիւնը։ «Ո՞ւր տեսնուած բան է, կ'ըսէ նա, որ խոտը կրակն այրէ, կամ կաւն՝ աղբիւրը լուայ...»։ Հակադրութիւններն ալ ընդհանրապէս գեղեցիկ են, վառ գոյներով ու կտրուկ. «Ցորդանանու մէջ Արեգակը կը լուացուի. հուրը՝ ջրի մէջ կը մկրտուի»։

Որոշակի կը դնէ Ծննդեան և Աստուածայայտնութեան անջատ տօնախմբութիւնը. խնդիր մը՝ որ, մեր մէջ մանաւանդ, երբեմն այնքան վէճերու նիւթ է դարձած։ Հեղինակը Ս. Սահակայ օրով կը գրէր, և մեր Ս. Հարք. նախանձախնդիր միշտ կրօնքի եւ Եկեղեցւոյ պայծառութեան, պառնց դժուարութեան, այսու եւս ճոխացուցին մեր սրբազան մատենագրութիւնը։ Հաւատի նշան, թէ այս քանիս մէջ մեր Ա. Նախնիք՝ լուսեւոր համամիտ էին Ցունաց։ Ապա թէ ոչ՝ կրնային չթարգմանել, կամ այդ քանի մը բառերն յապաւել։

Ոսկեդարու գործ չ'երեւար։ Ցուցանիր, հետեւակազնացեալ, որդուական, ուսմատուցին, գերազանցութիւն, գերառաւելեալ եւն. յիսնագոյն դարու գուշակ են։

Առաջին անգամ է որ ի լոյս կ'ընծայուի ճառս, Գրիգոր կթղ. Անաւարզեցւոյն ճառընտրէն՝ «գրեալ վասն Աւշնի թագաւորին», էջ 659–63. որ մատենադարանիս Ը, գ. 710 թիւը կը կրէ։ Մեծադիր է, մագաղաթեայ, երկսիւն նոտր՝ ընտիր գրչութեամբ։

Ցունարէնը կը գտնենք Migne, P. G. հտր. Կե, էջ 758–63։ Հրատարակութիւնս բառ առ բառ համեմատուած է բնագրին հետ եւ սրբագրուած։ Թարգմանութիւնը հաւատարիմ է և գրեթէ բառական։ Հայերենի անճիշդ, և բնագրէն տարբեր կէտերը՝ որոնք իմաստին մթութիւն կը պատճառէին, ծանօթութեանց մէջ պիտի տեսնենք։

Մեր թերթերն ու լրագիրները, կարծես կը մրցին օտարի չար աղանդներուն ձայնատու հանդիսանալու, մանաւանդ երբ անոնք բողոքական ըլլան. ի հեճուկս ամենոց, ես ալ՝ անճառահրաշ տօնիս առթիւ, զայս ուզեցի տալ Հայ ընթերցողաց ձեռքը, որպէսզի կարդան և սորվին հոգւով ու սրբոտով իրենց Ս. Հարց հարազատ որդիք ըլլալ։

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. ՔՐԻՍՏՈՍ աշխարհի յայտնեցաւ, և զանազարդ աշխարհս զարդարեալ լուսաւորեաց։ Զաշխարհի զմեղս երարձ, և զթշնամին աշխարհի արտաքս ընկէց։ Սրբեաց զաղբիւրս ջուրց, և լուսաւորեաց զոգիս մարդկան։ Զարմանք պատեցին զիս մեծագոյն զարմանալեօք. քանզի այսօր երկիր և ծով մասնաւորեալ՝ բաժանեցին զուրախութիւն Փրկչին, և աշխարհ ամենայն խնդութեամբ լցաւ։ Վասն զի քան զյառաջահասն տօն, այսր աւուր տօն մեծագոյն ցուցանէ զառնումն սքանչելեաց։ Քանզի յառաջ անցեալ տօնի ծննդեան Փրկչին, երկիր ուրախացաւ ի մսուր զբոլորիցս Տէրն բառնալով։ Իսկ ի յայսր աւուր տօնիս Աստուածայայտնութեան՝ ծով յոյժ բերկրեալ զուարճանայ, որպէս ի ձեռն Յորդանանու՝ ըստ սրբութեանն օրհնութիւն ընդունելով։ Ի յառաջ անցեալն տօնի՝ անկատար տղայ ցուցանիւր վկայեալ մերումս անկատարութեան։ Իսկ ի յայսր աւուր տօնի՝ կատարեալ տեսանի ի կատարելոյ, զկատարեալն նշանակելով։ Անդ զծնունդն գուշակեաց որ յարեւելս երեւեալ աստղն. իսկ մկրտելումն՝ վկայէ ի վերուստ ծնողն Հայր[1]։ Անդ մոգք յարեւելից հետեւակացեալ որգունակ թագաւորի եղեն ընծայաբերք։ Իսկ աստ հրեշտակք ի յերկնից եկեալ՝ որպէս Աստուծոյ զվայելչականն սպասաւորութիւնս առմատուցին։ Անդ կապեալ լինէր խանձարրոցն կապանօք, իսկ աստ՝ լուծանէ զմեղացն տոռունս։ Անդ թագաւորն զծիրանիս մարմնոյն զգեցաւ, իսկ աստ՝ աղբիւր[2] զգեստ զգեցաւ։

Բ. Եկայք այսուհետեւ տեսէք հրաշափառ սքանչելիս։ Զարդարութեան[3] արեգակն ի Յորդանան լուացեալ, և զհուրն՝ ի ջուր մկրտեալ[4]։ Այսօր ամենայն արարածք օրհնելով զմկրտեալն[5]՝ գոչեն, Օրհնեալ որ գայն յանուն Տեառն։ Օրհնեալ որ յամենայն ժամ գալոցն է. քանզի ոչ եթէ զառաջին ինչ եկն այսօր։ Օրհնեալ որ գայ յանուն Տեառն. որ յաղագս նախախնամութեան արարածոցս գայ։ Զերկնիցն բարձրութիւն անմերձենալի պահեալ, զարեգական ընթացս արուեստիւ կառավարելով, աստեղացս բազմութեան՝ անմոլար կարգապետելով, զօդոցն շնչմունս բարեխառնութեամբ յօրինելով, գետոցն վտակաց՝ անմոլարապարար առաջնորդելով։

Զայս ամենայն ապա նկատելով՝ ասեմ, Օրհնեալ որ գայն յանուն Տեառն։ Ո՞վ է սա, ասա՛ յայտնապէս, ո՛վ երանելիդ Դաւիթ։ Աստուած Տէր երեւեցաւ մեզ։ Եւ ոչ միայն մարգարէս Դաւիթ ասէ, այլ և առաքեալն Պաւղոս վկայէ բարբառեալ վասն նորա այսպէս. Երեւեցաւ շնորհքն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան[6]։ Ոչ սակաւուց ոմանց, այլ բոլորից իսկ, Հրէից և հեթանոսաց ի ձեռն մկրտութեանս՝ ըստ փրկութիւն ամենեցուն շնորհելով։ Հասարակաց բոլորից առաջի արկանելով զմբկերրտութեանս պարգեւս։

Գ։ Եկայք այսուհետեւ տեսէք, նո՛ր և սքանչելի ջրհեղեղ, յոյժ վեհագոյն եւ լուսաւորագոյն քան որ առ Նոյիւն երեւեալ։ Անդ ահա ջուր ջրհեղեղին զմարդկայինն բնութիւն ապականեալ կորոյս. իսկ աստ՝ ջուր մկրտութեանն ի ձեռն մկրտելոյն, զմեռուցեալսն կենագործեաց։ Անդ Նոյ զտապանն յանփուտ փայտից վերականգնեաց. իսկ աստ Քրիստոս իմանալին Նոյ, առ ի յանապականն Մարեմայ զմարմնոյն զտապան կազմեաց։ Անդ Նոյ զտապանն արտաքուստ կպրով[7] եւ ձիւթով ծեփեաց. իսկ աստ Քրիստոս զգուշութեամբ հաւատոյն՝ զմարմնոյն զարգացոյց զտապան[8]։ Անդ աղաւնոյն զշիղ ձիթենոյն բարձեալ, զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ելից զանուշութիւն. իսկ աստ՝ Հոգին Սուրբ տեսութեամբ աղաւնոյ եկեալ, զողորմածն եցոյց զՏէր մեր Յիսուս Քրիստոս[9]։ Բայց առաւել հիացուցանէ զիս Փրկչին խոնարհամտութեամբն գերազանցութիւնն. զի ոչ համարեցաւ բաւական առ ի կատարելոյ կատարեալն՝

տղայ ի կնոջէ ծնանիլ։ Ոչ համարեցաւ բաւական որ աթոռակիցն էր Հօր՝ առնուլ զծառային կերպարանս, այլ որպէս զմեղաւոր՝ գայ առ ի մկրտել առաջի Մկրտչին։ Բայց մի՛ լիցի հասարակաց բանին ներգործութիւն՝ գայթակղութիւն լսողաց։ Քանզի մկրտի[10] բոլորիցս Տէրն, ոչ զի մաքրութեան կարօտեալ, որ քա՛ւ և մի՛ լիցի[11], այլ երկու այս օրինակօք՝ զօգուտն մեզ մատակարարեալ. զի և ջրոց զսրբարարական շնորհ պարգեւեսցէ, և զի զամենայն մարդ առ ի մկրտութիւն հրաւիրեսցէ։

Դ. Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէէ ի Յորդանան առ Յովհաննէս մկրտել ի նրանէ։ Եւ զի՞նչ էին յայն ժամու կատարեալքն, եղբարք. զմտաւ ածել անհնարին է, քանզի վերագոյն էին մարդկայնոցս աչաց տեսեալքն։ Դողան միտք և լեզու փախստական լինի ի բերանոյ՝ ոչ իշխելով ճառել զանճառելիսն։ Ուստի տեսեալ Յովհաննու զՅիսուս զի գայր առ նա՝ ճգամբ բազմաւ սիրտն լցեալ լինէր, անկանելով և առաջի զինքն տարածանելով զոտից նորա բուռն հարեալ՝ աղաչէր բարբառելով առ նա այսպէս։

Զի՞ բռնադատես զիս, ամենազօրդ, առնել ինձ տկարի՝ որ ի վեր գոյ քան զիմ զօրութիւն։ Ո՞րպէս իշխեցից զքեզ մկըրտել։ Ե՞րբ, և կամ յո՞րժամ հուր ի խոտոյ այրեցեալ եղեւ, և կամ ե՞րբ կաւ զաղբիւր լուաց։ Զի՞արդ իշխեցից մկրտել ըստ բիւր լուաց։ Զի՞արդ դատապարտութեամբս։ դատաւորդ՝ որ ընդ դատապարտութեամբս։ Ո՞րպէս մկրտեցից զքեզ, ո՛վ Տէր։ Բիծ ինչ ո՞չ տեսանեմ ի քեզ, քանզի մեղս ոչ ա՛ոչ տեսանեմ ի քեզ, քանզի մեղս ոչ ա՛ոչ տեսանեմ ի քեզ, բ

պարար հայրապետական սիրով, Դա է Որդի իմ սիրելի որով հաճեցայ։ Եւ զի մի՛ երկբայիցին միտք լսողացն առ ի մկրտեալն և ի մկրտիչն, գայ Հոգին Սուրբ ի նմանութիւն աղաւնւոյ, մատնացոյց առնելով զմկրտեալն և վկայելով[16]։ Որում վայելէն փառք պատիւ և զօրութիւն, Հօր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և յանընդհատ յաւիտեանս[17]. ամէն։

---

1. Զեռագիրն ունի՝ Ծնողն Հօր, 2. ձ. Երկիր՝ զգեստ զգեցաւ, 3. ձ. Զարևգակն՝ արեգակն ի Յորդանան լուացեալ, 4. ձ. և ի մարդոյ զԱստուած սրբեալ, 5. յն. չիք զմկրտեալն, 6. յն. յաւելու՝ վարդապետելով մեզ, 7. ձ. Նիւթով և ձիւթով, 8. ձ. զտաճար, 9. յն. միայն զՏէրն, 10. ձ. մկրտեցաւ, 11. յն. չիք բաւ և մի՛ լիցի, 12. ձ. Եւ զիաւրդ զանկեալս աղտեղութեամբ մարդ՝ սրբիցեմ զԱստուած անմեղս։ Յոյն բնագիրն այս է. Πως ουν εγω ο καταρρυπος ανθρωπος αγνισω Θεον, Θεον αναμαρτητον. որ է. և զիաւրդ ես անկեալս ընդ աղտեղութեամբ մարդ՝ սրբեցից զԱստուած, զԱստուածդ անմեղ։ 13. ի ձ. չիք Եւ զի յաւիտեան է ողորմ նորա՝ վասն այսորիկ եւն.։ 14. Զեռագրին մէջ նախադասութիւնս յաջորդէն վերջ դրուած է. ըստ իմաստին ուղղեցի։ 15. ձ. Աստուծոյ, 16. ձ. վայելիով, 17. յն. միայն զի նորա է փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ս. ՍԻԼՈՒԻԱՅԻ ԿԱՄ ԼԱՒ ԵՒ ԵԹԵՐԻԱՅԻ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի Ս. ՏԵՂԻՍ

(Շար. տե՛ս Բազմ. 1933. էջ 491)

Ցետ կարդալու, ուրեմն այդ տեղւոյն վրայ բոլորը Մովսէսի գրքէն, և ըստ օրինի պատարագ ընելով և մենք հաղորդուելով հոն, երբ եկեղեցիէն ելլելու վրայ էինք, քահանաները մեզի տուին տեղւոյն օրհնութիւնները, այսինքն այն պտուղները որ Նոյն լեռան վրայ կը հասնին։ Վասն զի թէեւ Սինա սուրբ լեռը ամբողջովին ապառաժուտ է, այնպէս որ ոչ մէկ բոյս ունի, սակայն ստորեւ, այն լեռներուն ոտքին մօտ, այսինքն թէ անոր շուրջը որ միջինն է և թէ՛ անոնց որ շուրջն են, քիչ մը հող կայ. հոն, այդ սուրբ միայնակեացները, ըստ իրենց ջանասիրութեան, շուտով փոքրիկ ծառեր կը տնկեն և պտղանոց կը շինեն կամ ագարակ, և անոնց քով եղած մենաստանները որպէս թէ այն լեռան հողէն պտուղներ կը ստանան, որոնց համար սակայն կը տեսնուի որ իրենց ձեռքով աշխատած են։ Հոն ուրեմն երբ այսպէս հաղորդուեցանք և օրհնութիւնները տուին մեզի այն սուրբերը եւ եկեղեցւոյ դռնէն դուրս ելանք, այն ատեն սկսայ աղաչել անոնց որ մեզի ցուցնեն բոլոր տեղերը։ Այն ատեն այդ սուրբերը հաճեցան մեզի ցուցնել մէն մի վայր։ Վասն զի մեզի ցոյց տուին այն այրը՝ ուր կեցեր էր Ս. Մովսէս, երբ կրկին անգամ Աստուծոյ լեռն ելած էր որպէսզի վերստին առնէր տախտակները՝ առաջինները ջախջախած ըլլալով երբ ժողովուրդը մեղանչեց. և միւս բոլոր տեղերը՝ զորս կը փափաքէինք կամ որոնց իրենք լաւատեղեակ էին՝ հաճեցան մեզի ցուցնել։

Բայց կ'ուզեմ որ ան ալ գիտնաք, յարգելի տիրուհի քոյրեր, թէ այն տեղէն՝ ուր էինք, այսինքն եկեղեցւոյ պատերուն

շուրջը, այսինքն միջին լերան կատարէն այնպէս մեզմէ ցած կը տեսնուէն այն լեռները՝ որոնց վրայ նախապէս հազիւ ելած էինք, որպէս թէ բլրակներ ըլլային, թէեւ այնքան անսահման են որ, կը համարիմ թէ երբեք անոնցմէ աւելի բարձր տեսած չըլլամ, բաց ի այս միջինէն որ զանոնք մեծապէս կը գերազանցէր։ Իսկ Եգիպտոսն ու Պաղեստինը և Կարմիր ծովը և Պարթենինեան ծովը որ Աղեքսանդրիա կը տանի, ինչպէս նաեւ Սարակիդրիա կը տանի, ինչպէս նաեւ Նոսներու ընդարձակ սահմանները այնքան թանց գրքէն. վասն զի մենք մեծապէս . . . միշտ կը փափաքէինք որ, ուր որ երթայինք, միշտ նոյն տեղը գրքէն կարդացուէր։ Հոն ալ պատարագ մատուցանելէն վերջ ուրիշ տեղ գնացինք՝ անկէ ոչ շատ հեռու, ինչպէս որ մեզի կը ցուցնէին քահանաները կամ միայնակեացները, այսինքն՝ ինքն այնտեղ ուր կեցած էր Ս. Ահարոն՝ Եղբայրն Մովսէսի հետ, երբ Ս. Մովսէս Աստուծմէ կը ստանար Օրէնքը Իսրայէլի որդւոց։

Այնտեղ ուրեմն, թէեւ յարկ մը չկայ, կայ սակայն ահագին քար մը վրան չորս կողմը տափարակ, որուն վրայ կ'ըսուի թէ կեցեր են այն սուրբերը. վասն զի մէջտեղն ունի իբրեւ քարակերտ սեղան մը։ Հոն ալ ուրեմն կարդացուեցաւ նոյն տեղը Մովսէսի գրքէն եւ մէկ սաղմոս ըսուեցաւ՝ տեղւոյն յարմար։ Հոն աղօթքն ընելէն վերջ՝ անկից վար իջանք։

Եւ ահա արդէն գրեթէ ուշերորդ ժամն եղաւ, եւ դեռ երեք մղոն կը մնար որ կտրէինք լեռները որոնց մէջ մտած էինք նախորդ իրիկունը. բայց նոյն կողմէն դուրս պիտի չելլէինք՝ ուսկից որ մտած էինք, ինչպէս որ վերն ըսի, վասն զի հարկ էր որ պտտէինք բոլոր սուրբ տեղերն եւ մենաստանները որ հոն կային, տեսնել և այնպէս իջնել ծայրը այն հովտին՝ ինչպէս վերն ըսի, այսինքն այն հովտին՝ որ Աստուծոյ լերան տակն է։ Եւ անոր համար հարկ էր որ այդ հովտին ծայրն իջնէինք, որովհետեւ հոն շատ մենաստաններ կային սուրբ մարդերու և եկեղեցի մ'ալ տեղւոյն վրայ՝ ուր էր մորենին, որ մինչեւ այսօր կ'ապրի և ընձիւղներ կ'արձակէ։ Եւ այսպէս ուրեմն, Աստուծոյ լեռնէն իջած հասանք մորենիին՝ հաւանօրէն տասներորդ ժամուն։ Հոս է մորենին, ինչպէս վերն ըսի, որուն մէջէն Տէրը Մովսէսի հետ խօսեցաւ կրակով, որ այն տեղն էր ուր շատ մենաստաններ կան և եկեղեցի մ'ալ նոյն հովտին ծայրը։ Իսկ եկեղեցւոյն առջեւն ալ հաճելի պարտէզ մը կայ, որ առատ և ընտիր ջուր ունի, և այդ պարտէզին մէջն է որ մորենին կը գտնուի։ Հոն մօտը կը ցուցնեն նաեւ տեղը ուր կեցաւ Ս. Մովսէս, երբ Աստուած իրեն ըսաւ «կօշիկներդ հանէ» եւն.։ Երբ այն տեղն հասանք՝ արդէն տասներորդ ժամն էր, ուստի արդէն երեկոյ էր՝ չկրցանք պատարագ ընել։ Բայց աղօթք ըրինք եկեղեցւոյ մէջ ինչպէս նաեւ պարտէզին մէջ մորենիին քով, կարդացուեցաւ նաեւ այն տեղը Մով-

- digitised by A.R.A.R.@